



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, քարտուղարություն, հեռ. 596-125

N *11/14.11*

«*18*» ... *15* ... 201*7*թ.

Ձեր

**<<Էլիպս Գրուպ>> ՍՊԸ -ի փնտրեն Կ. Մեհրաբյանին
ք. Երևան, Խորենացու 24**

Հարգելի պարոն Մեհրաբյան

Հիմք ընդունելով ՀՀ ոստիկանության և <<Էլիպս Գրուպ>> ՍՊԸ -
ի միջև 23.08.2017թ. կնքված թիվ ՀՀ ԿԱ Ո ԳՀԱՊՁԲ-2017-ՏԿ-
ՃՈ/ԱՎՎ/ՊՊԳՎ/1 ծածկագրով պայմանագրի 8.1 կետը և ՀՀ
ֆինանսների նախարարության 06.09.2017թ. թիվ 03/26-1/16183-17
գրությունը՝ (կցվում է) ՀՀ ոստիկանությունը միակողմանի լուծում է վերը
նշված պայմանագիրը:

Հարգանքով՝

Ոստիկանության գեներալ-մայոր

Անուբաղ Համբարյան

Կապարող Ն. Եղիգարյան
Հեռ. 010-59-60-39



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Ն Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1

Հեռ.՝ (+374 11) 800 , ֆաքս՝ (+374 11) 800 132

Վեբ կայք՝ www.minfin.am

03/26 1/16183-17


06.05.17թ.

ՀՀ ԿԱ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ
ՊԱՐՈՆ ԱՆՈՒԲԱՂ ՀԱՄԲԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Համբարյան

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ կարգ) 106-րդ կետի՝ «CLIENT-TRESUARY»-«LSFinance» (ԳԳՕ) համակարգ մուտքագրված տվյալների հաշվառման արդյունքում արձանագրվել է հետևյալը.

1. 13.06.2017թ, 27.06.2017թ. և 21.07.2017թ. հայտարարված համապատասխանաբար ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԱՊՁԲ-17/12/ԱԲ/ԿԾ, ՀՀ ԿԱ Ո ԳՀԱՊՁԲ-2017-ՏԿ-ՃՈ/ԱԿԿ/ՊՊԳԿ և ՀՀ ԿԱ Ո ԳՀԱՇՁԲ-Մ/2017 ծածկագրերով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգերի հրավերները կազմվել են ՀՀ ֆինանսների նախարարի 24.05.2017թ. թիվ 237-Ա հրամանով հաստատված էլեկտրոնային եղանակով կազմակերպվող գնումների բազային միավորի հնգապատիկը գերազանցող հրավերի օրինակելի ձևին համապատասխան, այնինչ վերոհիշյալ ընթացակարգերի հրավերներում ներառված պայմանագրերի նախագծերին կից տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցերում նշված գնման առարկաները չեն գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը:



06

5 842

05

18

ՀՀ ԿԱ Ո ԳՀԱՊՁԲ-2017-ՏԿ-ՃՈ/ԱՎՎ/ՊՊԳՎ ընթացակարգի արդյունքում 23.08.2017թ. «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի հետ կնքվել է թիվ ՀՀ ԿԱ Ո ԳՀԱՊՁԲ-2017-ՏԿ-ՃՈ/ԱՎՎ/ՊՊԳՎ/1 պայմանագիրը այն դեպքում, երբ կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված տվյալների մասին ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված եզրակացության համաձայն՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հիշյալ ՍՊԸ-ն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ:

2. 21.08.2017թ. և 17.08.2017թ. «ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ» ՍՊԸ-ի ու «ԵՈՒՐՈՄՈԹՈՐՍ» ՓԲԸ-ի հետ կնքվել են ՀՀ ԿԱ Ո ՄԱ-ԾՁԲ-ԱՎՏՈ-ՃՈ/2017/3 և ՀՀ ԿԱ Ո ՄԱ-ԾՁԲ-ՄՈՏՈ-ՃՈ/2017 պայմանագրերը, որոնց համաձայն նախատեսվում են ձեռք բերել ծառայություններ՝ կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված ցուցակի 15-րդ տողի հիմնավորմամբ, այն է՝ գնման առարկայի ձեռքբերման պայմանագրով նախատեսված դեպքերում գնման առարկան արտադրած կամ վերջինիս միակ ներկայացուցիչ հանդիսացող անձից գնման առարկայի տեխնիկական սպասարկման ծառայությունների՝ ներառյալ սպասարկման համար անհրաժեշտ պարագաների ձեռքբերում: Ուստի վերոհիշյալ գործարքները հաշվառելու նպատակով անհրաժեշտ է ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնել հիշյալ գնման գործընթացներն իրականացնելու համար հիմք հանդիսացող պայմանագրերի պատճենները:

3. 28.08.2017թ. «ԿԱՐԿՈՄԱՎՏՈ» ՍՊԸ-ի հետ կնքվել է թիվ ՀՀ ԿԱ ՈՁ ՄԱԾՁԲ-2017/ԱԲ/2/ԱԾ/73 պայմանագրը՝ կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված ցուցակի 15-րդ տողի հիմնավորմամբ: Հիշյալ պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցից պարզ չէ, թե ինչ մակնիշի մեքենաների համար է իրականացվում տեխնիկական սպասարկման ծառայությունները: Ինչպես նաև պայմանագրի 1.1 կետով նախատեսված է ձեռք բերել ավտոմեքենաների հետերաշխիքային սպասարկման ծառայություններ, այն դեպքում երբ հիշյալ գնման գործընթացն իրականացնելու համար հիմք հանդիսացող պայմանագրի համաձայն ձեռք բերված ավտոմեքենաները գտնվում են երաշխիքային սպասարկման ժամկետում:

Միաժամանակ հայտնում ենք, որ ՀՀ ԿԱ Ո ԳՀԱՊՁԲ-2017-ՏԿ-ՃՈ/ԱՎՎ/ՊՊԳՎ ծածկագրով ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրերում 36-րդ, 51-րդ, 52-րդ, 53-րդ, 54-րդ, 55-րդ, 56-րդ և 57-րդ չափաբաժիններով գնման առարկաները համակարգում և պայմանագրերի կառավարման ու գնումների հաշվետվողականության համակարգում մուտքագրված է CPV կոդի տարբեր հերթական համարներով:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է ՀՀ ֆինանսների նախարարի 11.07.2017թ. թիվ 345-Ն հրամանի N2 հավելվածով հաստատված կարգին համապատասխան ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնել պարզաբանում՝ արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝



ԿԱՐԵՆ ԹԱՄԱԶՅԱՆ